հանջեն մի հայ արքեպիսկոպոս և կամ մի ուրիշ աստիճանի հոգևոր անձն առաքել իրենց մօտ, թող այդ պաշտօնեաները նոյն ինքն հայրապետի վկայագիրն ունենան և առանց այդ վկայագրի Մեր պետութեան մէջ չընդունուին... Բացի այդ՝ երաշխաւորում ենք յիշեալ վեհագնեայ Սիմէոն կաթողիկոսին և ազնիւ իւզբաշիներին ու կառավարիչներին և ամբողջ ազնուաբարոյ Հայ ազգին և մանաւանդ ռուսաց կայսրութեան մէջ բնակուող հայերին Մեր Բարձրագոյն Կայսերական շնորհն ու հովանաւորութիւնը. և ընդ սմին ծանուցանում, որ Սիմէոն հայրապետի կողմից Դաւիթ վարդապետի ձեռքով Մեզ առաքուած մասունքները... առանձին հաճութեամբ ընդունած ենք... և յիշեալ Դաւիթ վարդապետը... կարող է բերանացի հաղորդել համայն Հայ ազգին Մեր Կայսերական շնորհի և բարեսիրութեան հաւաստիքը, որով կամք և մնամք...»: Այս հրովարտակի պատճէններն առաքուեցան պարտուպատշաճ գործադրութեան համար Աժտարխանի և Կիզլի գեներալ նահանգապետներին:

Դաւիթ վարդապետն այդ Բարձրագոյն հրովարտակից զատ Էջմիածին տարաւ մատուցանելու հայրապետին նաև մի նամակ մինիստր կոմս Ն. Յ. Պանինի կողմից և ընծաներ արքունի տանից—«մի քանի կտոր դիպակ և գազ, յապացոյց», ինչպէս գրում էր Պանին կոմսը, «Նորին Մեծութեան առանձին արքայական բարեհաճութեան յատկապէս դէպի Ձեր անձը»:

Կոմս Ն. Յ. Պանինը վերոյիշեալ նամակում, ի միջի այլոց, գրում էր հայրապետին, «Թէ Ձեզ և թէ ամբողջ ազնիւ Հայ ազգին ուղղուած ամենաշնորհ հրովարտակից հանդամանօրէն կիմանաք, թէ Նորին Կայսերական Մեծութիւնն ինչպիսի յօժարութեամբ բարեհաճեց զիջանել յիշեալ Դաւիթ վարդապետի ձեռքով Ձեր առաքած խնդրին և ինչ առանձին արքայական հաւանութեամբ ընդունեցան Նրա բերած մասունքն և Նոյեան տապանի մասնիկը: Քաղցր է ինձ», յարում է կոմսը, «որ կարողացայ այս առթիւ իմ կողմից մի փոքր ծառայութիւն մատուցանել Ձերդ Սրբութեան և ըստ կարելւոյն նպաստաւոր լինել Ձեր փափագի կատարման, որի մասին այս գրութիւնս բերողը չի զլանայ վերադառնալուն պէս անձամբ զեկուցում տալ Ձերդ սրբութեան»:

Դաւիթ վարդապետի առաքելութեան այդ աստիճանի յաջող ելքը մեծ յոյսեր ներշնչեց սրբազնագոյն Սիմէոնին: Այսու-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան